



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՏԱՐԱՍ ԶԵՎՉԵՆԿՈ

ԿՏՆԿ

«Կտակի ՚հայերեն  
Թարգմանություններ»



ՏԱՐԱՍ  
ՇԵՎՉԵՆԿԱՌ † ԿՏԱԿ





ТАРАС ШЕВЧЕНКО

ЗАПОВІТ


*Вірменські  
переклади «Заповіту»*

•  
*Дослідження*

•  
*Примітки*

Товариство «Вірменська письменність»

Ереван—1990





ՏԱՐԱՍ ԾԵՎՉԵՆԿՈ

ԿՏԱԿ

«Կառակի» հրատարակչական ընկերություն

Մեծ Մասիսի թիվ 12


Օմանյան պողոտա

A I  
19029



«Հայ դպրություն» ընկերություն

Երևան—1990



### Շեշենկո Տ.

Շ 505 Կտակ: «Կտակի» հայերեն քարգմանությունները /Տարաս Շեշենկո; [Վերջարանները և Միրիջանյանի, Ս. Ամիրյանի]; «Հայ դպրություն» ընկերություն.— Խր.: 1990.— 74 էջ.

*Գրքույկում ներկայացված են Տարաս Շեշենկոյի «Կտակի» հայերեն բոլոր թարգմանությունները, ինչպես նաև երկու ուսումնասիրություն՝ նվիրված մեծ բանաստեղծի այդ հուշակալոր ստեղծագործությանը: Տրված են ծանոթագրություններ և Շեշենկոյի հայերեն ժողովածուների վերաբերյալ մատենագիտական տեղեկություններ:*

*Խույս է ընծայվում Տարաս Շեշենկոյի ծննդյան 175-ամյակի առիթով:*

В книжке представлены все армянские переводы «Завещания» Тараса Шевченко и два исследования, посвященных этому выдающемуся произведению великого украинского поэта.

Книжка снабжена комментариями и библиографией.

Приурочена к 175-летию со дня рождения Т. Г. Шевченко.



Handwritten text in a cursive script, possibly a signature or a decorative flourish, enclosed within a large, stylized loop. The text is written in a dark ink on a light background. The script is highly decorative and difficult to decipher, but appears to be a personal name or a signature. The text is written in a cursive script, possibly a signature or a decorative flourish, enclosed within a large, stylized loop. The text is written in a dark ink on a light background. The script is highly decorative and difficult to decipher, but appears to be a personal name or a signature. The text is written in a cursive script, possibly a signature or a decorative flourish, enclosed within a large, stylized loop. The text is written in a dark ink on a light background. The script is highly decorative and difficult to decipher, but appears to be a personal name or a signature.







Թաղեցէք զիս, մեռնելէս վերջ  
Լայն արձակ դաշտի մը մէջ.  
Ձի գերեզմանս պէտք է ըլլայ  
Յիմ սիրական Ուքրայինա:  
Դաշտեր երկիր ցորենաբեր  
Ծեր Տընեբերն, նորս թըմբեր  
Թող տարածուին իմ չորս դին,  
Խոխոջք գետոյն պէտք է լըսուին:

**Թարգմանեց**  
**ՔԵՐՈՎԱԲԵ ՔՈՒՇՆԵՐՅԱՆ**

## Կ Տ Ա Կ Ը

Երբ ես մեռնեմ, ինձ թաղեցեք,  
Իմ սիրելի Ուկրայնում.

Գերեզմանիս հողաթումբը  
Թող բարձրանա բաց դաշտում:

Եվ այնտեղից թող երևան  
Դընեպրը, դաշտ ու ձոր.  
Թող ես լսեմ Դնեպրի  
Ահեղ ձայնը ամեն օր...

Գալ օրերի սիրով կապված  
Ընտանիքում մեծանուն  
Ինձ էլ յիշեք քաղցր խօսքով,  
Իմ եղբայրներ սիրասուն:

**Թարգմանեց**

**ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ**

## ԿՏԱԿ

Երբ մեռնեմ ես, թաղեցեք ինձ  
Բարձր գերեզմանում,  
Տափաստանի մեջ ընդարձակ,  
Մեր Ուկրաինայում,  
Որ արտերը անձայրածիր,  
Դնեպրը հառաչում  
Ե՛վ տեսնեմ ես, և՛ լսեմ ես  
Ինչպես է շտապում:

Ուկրաինայից երբ տանի նա  
Ու հասցնի մինչ ծով  
Ոսոխների արյունն... Այն ժամ  
Դաշտեր, սարերը մով  
Կըթողնեմ ես, կըլսանամ  
Մինչ երկինքը անհուն՝  
Աղոթելու... իսկ մինչ այդ ես  
Ձեմ նանայում աստծուն...

Թաղեցե՛ք ու ելեք ոտքի,  
Ծղթաները կտրեք,  
Եվ թշնամու չար արյունով  
Ազատություն ցողեք,  
Եվ ինձ այդ մեծ ընտանիքում  
Ե՛վ ազատված, և՛ նոր,  
Մի՛ մոռացեք, հիշեցե՛ք ինձ  
Խոսքով բարի, անդորր...

Թարգմանեց

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

## ԿՏԱԿ

Երբ կմեռնեմ, դուք թաղեցե՛ք  
Ինձ կուրգանի տակ այն,  
Որ որ հագնում է կապույտ մեզ  
Ստեպն ուկրաինական.—

Որ ես տեսնեմ, լսե՛մ հավետ  
Դնեպրի մըրուռնչը գոռ  
Ե՛վ արտերում երանավետ,  
Ե՛վ ափերում ոլոր:

Իսկ երբ քըշի Ուկրաինայից  
Նա դեպի ծոլն անծայր,  
Թշնամական արյունը պիղծ,  
Այնժամ ես արտ և դար  
Ամեն թողած՝ կհամբառնամ  
Մինչև երկնի դարբաս,  
Որ աղոթեմ, իսկ մինչև այն՝  
Զե՛մ ճանաչում աստված:

Թաղե՛ք դուք ինձ, հետո ելե՛ք  
Ու փշրեցեք շղթան,  
Զար թշնամու արյամբ ցողե՛ք  
Ծաղիկն ազատության:  
Եվ ինձ այն մեծ ընտանիքում,  
Այն նոր, ազատ, անամպ,  
Մի՛ք մոռանաք, հիշե՛ք անհուն,  
Անչար, խաղաղությամբ:

Թարգմանեց  
ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

## ԿՏԱԿ

Հենց որ մեռնեմ, դուք թաղեցե՛ք  
 Ինձ գերեզմանում,  
 Ստեպի մեջ լայնածավալ,  
 Ուկրաինայում սիրուն,  
 Որ արտերը անձայրածիր,  
 Դնեայրը դաշտի գրկում  
 Ինձ երևան, ու ես լսեմ  
 Ոնց է նա աղմկում:

Հենց որ քշի Ուկրաինայից  
 Նա դեպ ծովը լուրթ  
 Թշնամական արյունն, այն ժամ  
 Արտեր ու բլուր,—  
 Ողջ կթողնեմ, կվերանամ  
 Մինչև մոտը աստծո՛  
 Աղոթելու, իսկ մինչև այդ  
 Չեմ հավատում աստծուն:

Ինձ թաղեցե՛ք, ապստամբե՛ք.  
 Ծղթաները փշրե՛ք,  
 Թշնամական չար արյունով  
 Ազատությունն կոփե՛ք:  
 Եվ ինձ էլ մեծ ընտանիքում,  
 Ընտանիքում նոր, ազատ  
 Մի մոռացե՛ք ու հիշեցե՛ք  
 Խոսքով մեղմ, հարազատ:

Թարգմանեց  
 ԱՇՈՏ ԳՐԱԾԻ  
 11

## ԿՏԱԿ

Երբ ես մեռնեմ, ինձ թաղեցեք  
 Վեհ բարձունքում բլրակի,  
 Ստեպի մեջ ծով, լայնածիր  
 Ուկրաինայում հարազատ,  
 Որ արտերը անձայրածիր,  
 Կապույտ Դեկտրոն ու թումբը  
 Միշտ երևան ու լավի միշտ  
 Ոնց է ողբը մոռնում:

Երբ կտանի Ուկրաինայից  
 Դեպի ծովը կապույտակ  
 Արյունը նեղ թշնամու,  
 Այն ժամանակ ես կթողնեմ  
 Իմ հայրենի հող ու հանդ,  
 Պալատն աստծու կտորամ'  
 Աղթելու, իսկ մինչ այդ  
 Ձեմ ճանաչում աստծուն:

Թաղելով ինձ՝ ապստամբեք,  
 Շղթաները փշրեցեք,  
 Չար թշնամու արյունով  
 Ձեր կամքերը կոփեցեք,  
 Ընտանիքում ձեր մեծ, արի  
 Ընտանիքում՝ ազատ, նոր  
 Մի՛ մոռանաք, հիշեցե՛ք ինձ,  
 Խոսքերով մեղմ ու բարի:

Թարգմանեց

ԲԱԲԿԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## ԿՏԱԿ

Երբ որ մեռնեմ, ինձ կթաղեք  
Մի բարձրաբերտ տեղում՝  
Իմ սիրելի ուկրաինական  
Անձայր տափաստանում,  
Որ ես տեսնեմ մեր դաշտերը,  
Դնեպրի ամեն մի ոլորան,  
Որ լսեմ ո՛հնց է որոտում  
Մեր գետն ահեղաձայն:

Երբ նա սրբի Ուկրաինայից  
Ո: հասցրնի մինչ ծով  
Արյունն անարգ մեր թշնամու...  
Այնժամ հանգիստ խղճով  
Կսլանամ ես աստծու մոտ  
Եվ արտանց կաղոթեմ...  
Իսկ մինչև այդ՝ ես աստրծուն  
Հավատացողը չեմ:

Թաղեցե՛ք ինձ ու վե՛ր կացեք,  
Կտրե՛ք ամեն կապանք,  
Թշնամու արշամբ ցողեցեք  
Ազատությունը թանկ:  
Եվ նոր ու մեծ ընտանիքում՝  
Արդեն ազատ և գոհ,  
Զմոռանաք դուք ինձ հիշել  
Խաղաղ անչար խոսքով:

**Ուկրաինեանցից թարգմանեց**

**ԼԵՎՈՆ ՄԻՐԻՉԱՆՅԱՆԸ**



ԿՏԱԿ

Երբ ես մեռնեմ, դուք ինձ թաղեք,  
 Ինչպես հունդն են թաղում,  
 Ի՛մ սիրելի, ի՛մ անեզերք  
 Ուկրաինական հողում:  
 Որ տեսնեմ ես դաշտերն իմ մով,  
 Որ լսեմ ես մոտից,  
 Ո՞նց է շաշում ու շտաշում  
 Դնեպրը անազնալից:

Երբ Դնեպրը սրբի-տանի  
 Ծովին խառնի անտես  
 Սև թշնամու արյունը սև,  
 Այնժամ միայն, օ, ես  
 Թողած երկիր՝ երկինք կելնեմ,  
 Աստծուն կերթամ սրտանց  
 Աղոթելու... Իսկ մինչև այդ  
 Չեմ ճանաչում աստված:

Թաղեցե՛ք ինձ ու բարձրացե՛ք,  
 Փշրե՛ք շղթա ու կապ,  
 Տողե՛ք այգը ազատության  
 Թշնամու չար արյամբ.  
 Եվ ձեր ազատ ընտանիքում,  
 Ընտանիքում ձեր նոր,  
 Մի՛ սնուացեք, հիշեցե՛ք ինձ  
 Խոսքով անչար, անդորր:

Թարգմանեց

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ



3


3

*Handwritten text in a cursive script, possibly a signature or a name, written diagonally across the page.*



3

3




A I  
19029

### ԻՆՉՊԵՍ ԾՆՎԵՑ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Ոչ ոք չի տեսնում, թե ինչպես է ծնվում մարգարիտը: Նա զարգարում է կյանքը իր գոյությամբ, որի առջև այլևս իմաստ ունի՞ այն պարագան, թե անհուն ջրերի խորքում ի՞նչ նյութեր, ի՞նչ ձևերով, դանդաղ, անշտապ իրար շաղկապվելով, որակից որակ անցնելով, ներդաշնակվել ու ստեղծել են այն հրաշալիքը, որ մարգարիտ անունն ունի: Բայց արվեստի մարգարիտի բանն ուրիշ է: Նրա գոյավորման հանգամանքները միշտ կարևոր են:

Արվեստի այդ մարգարիտը իր պատմությունն սկսեց 1843-ի այն օրը, երբ իշխանուհի Վարվառա Ռեպնինան Տարաս Շևչենկոյին Բիբլիա նվիրեց: Նրկու տարի շարունակ Բիբլիան եղավ բանաստեղծի բառացիորեն անբաժան ուղեկիցը մինչև անգամ Համփորդությունների ընթացքում: Ա-



վելորդ է ասելը, որ Շեչենկոյին հրապուրում էին, ամեն բանից ավելի, այն էջերը, որոնցից բուրում էր ժողովրդական բանահյուսության շնացող շունչը, մարդկային ապրումների ու զգացումների կենդանի թարմությունը: Հրապուրում էր այն ամենը, ինչը որ կապվում էր ժողովրդի տառապանքների և նրա ազատության գաղափարի հետ: Իսկ այս թեմայով Բիրլիայում, փա՛ռք աստուծո, բան շատ կար: Ինչքան վերընթերցում էր, այնքան ավելի ու ավելի էր զգում, որ իր մեջ ունճանում է Բիրլիայից ինչ-որ բան թարգմանելու ցանկությունը:

Սակայն ցանկությունը դեռևս մտահղացում չէ:

1845-ի դեկտեմբերին, վերջապես, ժամանեց նորին մեծություն մտահղացումը՝ իրենով սլայմանավորելով թեման: Նախապատվությունը տրված էր Դավթի սաղմոսներին: Անշուշտ, ո՛չ բուլորին, այլ մի քանիսին միայն: Նրանց թիվը որոշակիացավ թարգմանության ընթացքում և հասավ տասի: Իր կատարած ընտրությամբ Տարաս Շեչենկոն, որ բանաստեղծում էր Կոբզար անունով, հետամուտ էր ստեղծագործական որոշակի ծրագրի իրականացման: Իր հայրենակիցներին մատուցելով Դավթի սաղմոսներից մի քանիսը՝ նա գրանք համեմեց իր սեփական խոհերով ու զգացումներով: Այնպես որ գրանք և՛ Դավթինն էին, և՛ ինչ-որ տեղ արդեն նրանը շէին միայն...

Պարզ ու որոշակի նկատելի են բանաստեղծի գրչի տակով անցած «Դավթի սաղմոսների» բընագրի հետ ունեցած փոխհարաբերության բոլոր մանրամասնությունները: Դրանք հաստատում են, որ Շեչենկոն տեղ-տեղ հանդես է եկել իբրև տեքստի հավատարիմ թարգմանիչ, տեղ-տեղ անցել է փոխադրության, տեղ-տեղ էլ հորինել-ստեղծագործել է: Սա երևույթի արտաքին՝ տեսանելի կողմն է, ուր բնագրի հանդեպ «մեղանշումը» չի դերադանցված այն շափից, որը անխուսափելի է շափածո թարգմանությունների ժամանակ: Անխուսափելիության այս պարագան էլ, թերևս, միակ կողմանն էր, որը Շեչենկոյին թույլ էր տալիս հուսալ, թե իր նավը կանցնի գրաքննության խոշոխութեբրի միջով: Հետագան ցույց տվեց, որ հանճարեղ բանաստեղծը նաև հանճարեղ ստրատեգ էր: Ոչ մի զորավար չի հաղթել առանց զոհերի: Շեչենկոյի զոհերը հոգևոր էություններ էին՝ մըտքե՛ր, իսկ մտքերն ընկնում, զոհվում, բայց շեն մեռնում և, ժամանակներ անց, հառնում են ու, դէնվերի նման, վերադառնում շարք:

Այսօր իրենց տեղում են այն բոլոր զոհված տողերը, որոնց փոխարեն Կորզարի թարգմանած «Դավթի սաղմոսների» ցարական հրատարակություններում կանգնած են մուսյլ, անխոս, բայց բոս էության շատ բան ասող կետեր: Միայն այսօրվա հրատարակություններն ընթերցողի համար դժվար կլինի պատկերացնելը, որ եղել են

ժամանակներ, երբ այս հոշակապ բանաստեղծաշարը նմանվել է կոտնկների կարկտահարված երամի...

Տեսնելու և հասկանալու համար, թե ինչպես ծնվեց բանաստեղծական խոսքի այն մարգարիտը, որի մասին է լինելու մեր ընդհանուր հետաքննումը, պետք է խոփի նման անցնենք թարգմանված բոլոր տասը սաղմոսների արտով՝ փորձելով թափանցել երևույթի ներսը՝ Կորզարի ստեղծագործական գաղտնարանը:

Առաջին սաղմոսը, որը բնագրում էլ թվով առաջինն է, թարգմանված է՝ հավատարիմ մնալով բնագրին, և ստեղծում է այն տպավորությունը, թե իբր բանաստեղծը հակված է հետադաշում էլ պահպանել բնագրի հանդեպ հավատարմության այդ դիրքորոշումը: Այս տպավորությունը ամրապլանդվում է նաև հաջորդ՝ 12-րդ թարգմանությունում: Այստեղ Շեչենկոն գիտակցորեն և շատ նուրբ ձևով մի փոքր փորձել է հեռանալ բնագրից՝ շեշտելու համար թշնամու հնարավոր ծիծաղն ու ուրախությունը, եթե ինչը (բնարական հերոսը) պարտվի: Շեշտված է բնարական հերոսի փրկություն հայցելը, որով և վերջանում է սաղմոսը:

Փրկի՛ր ինձ, կաղոթեմ  
Եվ կերգեմ նորից

Քո բարեկեր մաքուր սրտով,  
Սաղմոսով խաղաղ, նոր\*:

(Спаси мене, помолюся  
I воспою знову  
Твої блага чистим серцем,  
Псалмом тихим, новим).

Վերջին տողը մեզ հիշեցնում է ծանոթ ու  
հարազատ մի մեղեդու ինչ-որ ակորդը:

Հերթական սաղմոսը 43-րդն է: Թարգմա-  
նությունը գրեթե լրիվ համընկնում է բնագրի  
հետ: Կորզարը սրել է ասածու շուտափույթ օգ-  
նության կարևորությունը՝ ավելացնելով հետևյալ  
տողերը.

Հաղբեցիւր դու առաջին ուժը,  
Հաղբիւր և երկրորդը,  
Ավելի չարը...

(Поборов ти першу силу,  
Побори ж і другу,  
Ще лютішу!..)

Իսկ վերջին քառատողը սաղմոսը դարձնում  
է հույժ արդիական՝ նրան հաղորդելով բնագրից  
հետո շունչ ու լիցք.

---

\* Մեջբերումները տրված են տողացի թարգմանությամբ:  
—Մ. Հ.:



«... Հաշտվեց հոգին մեր,  
Ապրելը ծանր է շղթաների մեջ:  
Դե ելի՛ր, աստվա՛ծ, օգնի՛ր մեզ  
Ելնել դահնի վրա նորից»:

(«...Смирилася душа наша,  
Жить тяжело в оковах!  
Встань же, боже, помоги нам  
Встать на ката znovu».)

«Ապրելը ծանր է շղթաների մեջ»... Խիստ  
խափանցիկ ակնարկ ժողովրդի ճորտության, որի  
դեմ պարզիպարզո բանաստեղծը հայցում է աստ-  
ծու (բայց ըստ էության՝ ժողովրդի) հարվածը:  
Միանգամայն հասկանալի է, որ ցարական գրա-  
քննությունը նման տողերի փոխարեն պիտի թող-  
ներ կեներ...

Մթնոլորտը դանդաղ, մասամբ աննկատ, սկը-  
սել է շիկանալ:

Մյուս սաղմոսը 52-րդն է, ուր Դավիթը դա-  
տապարտում է աստծուն շհավատացող, նրա գո-  
յությունը ժխտող «անզգամին»: Օգտագործելով  
այս «անզգամի» կերպարը՝ Կոբզարը միանում է  
սաղմոսերգուի զայրույթին, որպեսզի այդ զայ-  
րույթի մեջ, իբրև թե էքստազում, իրավունք ձեռք  
բերի շեղվել բնագրից:

Բնագրում խոսվում է Իսրայելի փրկության և  
գերի ժողովրդի՝ իր երկիրը վերադառնալու մա-  
սին: «Փրկություն» և «գերի» հասկացողություն-

ները Կորզարը որոշակիացրել է՝ համապատասխանեցնելով իր ժամանակի բովանդակութեանն ու պահանջներին, դրանք դարձնելով «ազատութիւն» («ВОЛЯ») և «անազատութիւն» («НЕВОЛЯ»):

Գրաքննութիւնը մի կերպ հանդուրժել է «Աստված մեզ կվերադարձնի ազատութիւնը» տողը, բայց («Колись бог нам верне волю») դրան անմիջապէս հաջորդող «Կշարդի անազատութիւնը» («Розіб'є неволю») տողը բարեհաւել է հանել:

Ինչպէս տեսնում ենք, Կորզարը կաթիլ առ կաթիլ, կամաց-կամաց, հանճարեղ վարպետութեամբ սաղմոսների թարգմանութեան մեջ ներմուծում էր ազատութեան գաղափարը, որն իր հետ բերում էր անազատութիւնը ջարդելու անհրաժեշտութեան տրամաբանութիւն:

53-րդ սաղմոսը ունի համեմատաբար խաղաղ տրամադրութիւն: Ավելի փոխադրութիւն է, քան թարգմանութիւն, և ի հայտ է բերում բանաստեղծական ապշեցնող տեխնիկա: Կորզարը սաղմոսն ավարտում է մի հնչերանգով, որն այսօր, նախընթաց մի քանի ակորդների նման, մեզ վերադարձնում է քաջածանոթ մեղեդուն: Այս հնչերանգն ընդգծվում է, մանավանդ որ տեղագրված է ամենավերջին տողում՝ շրջապատի շարութեանը հակադրելով բանաստեղծի հակվածութիւնը դեպի մարդկային հոգու բարութիւնն ու անշարուրջութիւնը.

Եվ իմ շարերի վրա կնայեմ  
Անշար իմ աշուկ:

(I на злих моїх погляну  
Незлим моїм оком.)

Դավթին վերագրվող 81-րդ սաղմոսը ինքնըստինքյան դեմոկրատական շունչ ունի և աչքի է ընկնում մարդասիրական կոշով: Քնարական հերոսը հեթանոս աստվածների երեսին է նետում իր դառնացած հարցումը. «Մինչև ե՞րբ եք դատելու անիրավությամբ և հովանավորելու մեղավորներին» («Մինչև յե՞րբ դատիք լանիրաւութեամբ, եւ ակն առնուք մեղաւորաց»): Ապա և առաջադրում է իր արդարացի պահանջը. «Փրկեցեք աղքատին ու խեղճին, ազատեցեք մեղավորների ձեռքից» («Ապրեցուցեք զաղքատն և զտնանկն, ի ձեռաց մեղաւորի փրկեցեք զնոսա») և այլն: Այսֆանով շքավարարվելով՝ Դավթի քնարական հերոսը հանդգնում է կանխագուշակել աստվածների անփառունակ վախճանը. «Սակայն դուք մարդկանց՝ նման կմեռնեք և, ինչպես մի-մի իշխան, կընկնեք» («Դուք աւաղիկ որպէս մարդիկ մեռանիք, եւ որպէս զմի յիշխանաց անկանիք»): Սաղմոսի վերջում հերոսը դիմում է իր միակ աստծուն՝ Եհովային. «Արի՛, Աստված, դատիր երկիրը...» («Արի, Աստուած, եւ դատեա զերկիր...»):

Բնագիրն, ինչպես տեսնում ենք, լիցքավորված է բավականին ակտիվ շեշտերով: Այս ամենը հիմնականում պահպանելով՝ Կոբզարը սաղմոսի թարգմանության վերջին մասում ավելացրել է վերին աստիճանի դիպուկ ընդհանրացում՝ ստույգ հասցեով.

Ցարեր, սարուկները հավասար  
Որդիներ են աստծո առաջ:

(Царі, раби—однакові  
Сини перед богом...)

Անլուր հավասարեցում քարոզող այս երկտողը դրաբնությունը աչքաթող անել շէր կարող: Ո՞վ կթուլատրեր ի շիք հայտարարել այն անդունդը, որ կար ցարերի ու սարուկների միջև՝ նրբանց հռչակելով աստծու իրավահավասար որդիներ... Սա, հիրավի, հեղափոխական դեմոկրատիզմի արտահայտություն էր, որը լուծանակի նման կարող էր պայթիլ:

Սաղմոսներ թարգմանող Շեչենկոն իր տարիքի մեջ է: Ասես Պոսեյդոնն է նա՝ ծովերի աստվածը. մեկ նրա կամքով ջրերն ուռչում, լեռնանում են ահեղազդորդ որոտով ու սպառնագին, մեկ էլ իջնում են, հանդարտում՝ երջանիկ այն գիտակցությամբ, որ ցուցադրել են իրենց ամենակարող ուժը:

93-րդ սաղմոսը մի այդպիսի հանդարտված միջոցի տրամադրություն ունի: Բայց նրանք, ովքեր գիտեն ծովի բնույթը, պետք չէ վերջնական հավատ ընծայեն նրա հանդարտ պատկերին:

Շեչենկոյի ստեղծագործական խառնարանում ձևավորվում են նորանոր անակնկալ ժայթքումներ:

132-րդ սաղմոսը, որը բնագրում միատեղ բնակվող հավատակից եղբայրների ներդաշնակ ու համերաշխ կյանքի գովերգումն է, Կորզարի բռնկուն երևակայության մեջ վեր է աճում անսպասելի մի պատկերի: «Եղբայրներ» հասկացողությունը Կորզարն անսահման լայնացնում է, նրա մեջ զննելով բոլորովին նոր բովանդակություն: Կորզարի «եղբայրները» ճորտ և ընչազուրկ ժողովրդի զավակներն են, անվերջ տառապանքի մատնվածները, որոնք բոլորն իրար հետ միասին կազմում են «այն մեծ ընտանիքը», որի զաղափարը սաղմոսերգու Դավթին անհասանելի, բայց հեղափոխական-դեմոկրատ Շեչենկոյի համար սլարդ ու տեսանելի երևույթ էր: Ժողովրդի հարազատ զավակ Կորզարը «այն մեծ ընտանիքը» ազատ ու երջանիկ տեսնելու երազանքից բացի ուրիշ երազանք չուներ: 132-րդ սաղմոսը, համերաշխ եղբայրների իր պատկերով, հիանալի առիթ էր՝ զարգացնելու ժողովրդի մեծ ընտանիքի համախումբը, նույն շահերով տողորված գաղափա-

բակից եղբայրների հզոր ընտանիքի մտայնությունը: Ի՛նչ խոսք, Կոբզարը շէր կարող «այդ մեծ ընտանիքի» գաղափարը անջատել աստծու իրավահավասարությունից և չպայմանավորվել նրա բարեգութ կամքով: Բայց դա արտաքինն է՝ կեղևը, իսկ միջուկը միանգամայն ա՛յլ է՝ աշխարհիկ և առօրյա.

Այդպես, փառակից եղբայրներին իր  
Տերը շի մոռանա,  
Կրագավորի խաղաղ տանը,  
Այն մեծ ընտանիքում,  
Եվ կուղարկի նրանց բարի բախտ  
Դարեդար:

(О так братьев благих своіх  
Господь не забуде,  
Воцариться в дому тихих,  
В сем'ї тій великій,  
І пошле їм добру долю  
Од віка до віка.)

«Այն մեծ ընտանիքում», այս պատկերը մեզ  
անմիջապես անդրադարձնում է այն հարազատ  
մեղեգուն, որի տարբեր աղորդներին, այս էլ քա-  
նիկբորգ անգամ, անակնկալ հանդիպում ենք Շե-  
չենկոյի «Դավթի սաղմոսներում»: Պատահակա՞ն  
են այս ծանոթ աղորդները:

136-րդը, թերևս, ամենաէպիկական, միաժա-  
մանակ, ամենաքնարական ու ամենադրամատիկ  
սաղմոսն է: Սա Բաբելոնում գանվող գերիների

երգն է: Իր այս մեկ հատիկ սաղմոսով Դավիթը կարող է տեղ գրավել աշխարհի երևելի բանաստեղծների կողքին: Բայց ներկա դեպքում խնդիրը ոչ թե բուն սաղմոսն է, այլ գրա կոբզարյան թարգմանությունը, որպես հանճարեղ ստեղծագործության մի նոր՝ առավել բարձր աստիճան:

Հենց առաջին քառատողից զգացվում է, որ Շեչենևիտն սաղմոսի ընդհանուր արամադրությունը փորձում է տալ մարտական բնույթ: Սկզբից կեկթ «գերի» հասկացողությունը գիտակցորեն փոխարինված է «անազատություն» հասկացողությամբ: Բարեկացիք հանդես են բերված որոշակի, ոչ բընագրային սանձարձակ հոգեբանությամբ, նրանք գերի հրեաներին անվանում են «մեր ստրուկներ» („Невольники наши“) և նրանց առաջարկում երգել՝ հեզնաբար ավելացնելով.

Գուցե մենք էլ կլացենք...

(Може, й ми заплачем.)

Գրաքննությունը հանդես բերեց փոքրոգի բժախնայություն՝ կրճատելով հեռույալ երկատղը.

Կամ մեր երգեցեք,

Ստրուկներ մեր:

(Або нашу заспівайте,

Невольники наші.)

Բայց, կարելի է ասել, թարգմանությունն ընդհանուր առմամբ էժան պրծավ, քանի որ պահ-

պանվեցին երկու շատ կարևոր և սկզբունքային նշանակութեան բաներ՝ «անազատութիւն» («НЕВОЛЯ») և «շղթաներ» («КАЙДАНИ»): Այս երկու բաներն էլ բնագրում չկան, և գրաքննիչը հեշտութեամբ կարող էր գրանք հանել: Բայց այդ բաները պահպանվեցին: Գրաքննիչը վրիպեց արդյոք, չնկատելով բնագրի հետ կապ չունեցող այդ բաներն էլ բնագրում չկան, և գրաքննիչը հեշտանշանաբանութի արշուն կար մի՞ քիչ (նման դեպքերում այդ մի քիչն ամենեւին քիչ չէ):

Բուն սաղմոսում գերիները շղթայի զարնված չեն: Շեշենկոյի թարգմանութեան մեջ նրանք շղթայված են. դա անհրաժեշտութիւն էր, ժամանակի հրամայականն էր դա, ժամանակի ամենայրող հարցը, որին հետամուտ էր Կոբզարը ամեն վայրկեան: Չկորցնելով պատեհ առիթը՝ նա սրում է անազատութեան մեջ տառապող ժողովրդի վրեժխնդրութեան անխուսափելիութեան տրամաբանութիւնը: Ժողովուրդն ընկճված չէ, նա տակում է՝ հավատալով, թե կգա հատուցման օրը: Ժողովուրդը հավատում է, որ շարը անսպասան կպատժվի: Ներկա դեպքում դա հայեցողական հավատ չէ, սովորական հույսի զգացում չէ, որն բնահանրապես հատուկ է մարդուն: Կոբզարյան առոյթը բառացիորեն շիկացած են. հատուցման հավատը վեր է ածվում անխուսափելի պայքարի մտայնութեան: Գերիներից ամեն մեկը համակված է հատուցման դադափարով, որը դարձել է նրա



զոյության իմաստը: Գերիները համարձակ հայտարարում են իրենց նեղիչներին.

... Բաբելոնի

Դո՛ւսուր նզովյալ,  
Երանի նրան, ով կհատուցի  
Քո շղթաների համար:

(...Вавілоня

Дщере окаянна!  
Блаженный той, хто заплатить  
За твої кайдани!)

Շղթաների պատկերով Շեչենկոն անցած-զնացած ժամանակների մթնոլորտը տեղափոխում էր իր օրերը, և ամեն բան համահնչուն էր դառնում ճորտության շղթաների մեջ հեծող ժողովրդի վիճակի հետ: Այս սաղմուսը, 136-րդը, Կորվարյան սաղմոսաշարում արտահայտված ժողովրդական սլոյքարի տրամադրության բարձրակետն է՝ ապոգեյը:

Վերջինը 149-րդ սաղմոսն է. սա փայլուն կերպով բնդհանրացնում է ամբողջ շարքի հոգեբանական-իմաստային բովանդակությունը՝ շեշտը դրնելով հատուցման անխուսափելիության վրա: Երկսայրի սուրը, որը Դավթի ստեղծած պատկերն է, Կորվար Շեչենկոն նույնությամբ դնում է արդարների ձեռքը՝ գովաբանելով այդ զենքը.

Եվ լավն են սրերը նրանց ձեռների:  
Երկսայրի են...

(I мечі в руках їх добрі,  
Гострі обоюду...)

Երկսայրի սրերի պատկերը ամբողջականացնում է շղթաներից ազատվելու դադափարը: Ինչո՞վ կարտահայտվի ժողովրդի հատուցումը. նրանո՞վ, որ նա կշղթայի անկուշտ արքաներին և նրանց գործակիցներին, արդար դատով վերջ կտա նրանց անիրավ իշխանությանը.

Կշղթայեն անկուշտ արքաներին  
Երկաթե շղթաներով  
Եվ նրանց փառավորողների  
Ձեռներն էլ կշղթայեն...

(Окують царей несних  
В залізнії пута,  
I їх, славних, оковами  
Ручними окрутять...)

1845 թվականի դեկտեմբերի 19-ին, Վյունիշչայում, Կոբզարն ավարտեց «Դավթի սաղմոսները»: Ավարտվեց մի վիթխարի բանաստեղծական կտավ: Այն կարելի է համեմատել մի մեծաշունչ երաժշտության հետ, որը վերակենդանացնում էր մարդկության ապրած ամենաողբերդական վիճակներից մեկը՝ այն տեղափոխելով ներկա ժամանակի մեջ, ամեն ինչ իմաստավորելով մթնոլորտում խմորվող հեղափոխական դադափարաբանությամբ:

Ի՞նչ հիմնական պատկերներ կերտեց Շեչեն-

ապագայում ինքը մեծահոգաբար շարերի վրա  
կնայի անշար աշքով:

I на злих моїх погляну  
Незлим моїм оком.

Շեշենկոն հանդես է գալիս որպես հեղափոխական-դեմոկրատական գաղափարների պատգամախոս, որը պարզ տեսնում էր գալիք ժամանակը և հավատում ժողովրդի մեծագույն ուժի հաղթանակին: Նա ժողովրդին տեսնում էր մեծ ընտանիք դարձած: Որքան հրապուրիչ է ապագան, նույնքան հրատապ է անելիքը, չէ՞ որ տակավին շղթաներ կան ժողովրդի ձեռքին ու ոտքին: Շրջթաների պատկերն ամբողջացնում են երկսայրի սրերը: Պայքարի վերջնական նպատակը պարզ է.

Կշրքայեն անկուշտ աբխաներին  
Երկաթե շրթաներով...

(Окуют царей неситих  
В залізнії пуга...)

Հիմնականում սրանք էին այն հենակետերը, որոնց վրա Կորզարը բարձրացրեց «Դավթի սաղմոսների» անսովոր բարդ կառույցը, որը ունի արտաքին հիանալի քողարկիչ հնարավորություններ, բիրլիական պատկերների մի ամբողջ համակարգ: Այդ համակարգի բազմաթիվ պարագաներ պահպանելով հանդերձ, Կորզարը այն վերականուցեց ըստ իր պատկերացումների ու ըմ-

կոն իր «Դավթի սաղմոսներ» շարքում: Ի՞նչ սյու-  
ների վրա հիմնեց բանաստեղծական ամբողջ  
բարդ կառույցը:

Նախ, հենց սկզբից, Տարաս Շևչենկոն հան-  
դես եկավ իրրև մեծ մարդասեր: Նա երազում էր  
մաքուր բարքեր, որպեսզի դրանք երգի «Սաղմո-  
սով խաղաղ, նոր» („Псалмом тихим, новым“):  
Սա նրա գեղագիտական ելակետն էր: Մնացած  
բոլոր ցանկություններն ու գաղափարները պիտի  
ձգտեին դեպի այս մտայնությունը և ձուլվեին  
նրա հետ:

Շևչենկոն տալիս էր ժամանակի իրական նը-  
կարագիրը: Ինչպես միշտ, նրա մտածողությունը  
ժողովրդական է, պատկերը՝ դիպուկ, սեղմ, զըս-  
պանակված. «Դժվար է ապրել շրթաների մեջ»  
(„Жить тяжело в оковах!“):

Եզրակացությունը պարզ է, ծանր է ճորտու-  
թյունն ու անտանելի: Եվ Կորզարը սրբագրում է  
«փրկություն» հասկացողությունը, այն դարձնե-  
լով որոշակի, պարզ ու առարկայական՝ «ազա-  
տություն»: Բայց ազատության գաղափարը միայն  
փայփայելը ոչինչ չի տա: Անհրաժեշտ է հասնել  
նրան, որի համար պետք է շառղել անազատու-  
թյունը („Розид'є неволю“):

Կարծես թե վերհիշելու համար, որ այս ա-  
մենը թելադրված է մարդասիրական սկզբունք-  
ներով, Կորզարը մի պահ նորից անդրադառնում է  
մարդկային բարության պրոբլեմին, շեշտելով, որ

բըռնումների: «Դավթի սաղմոսները» ծրագրային բանաստեղծությունների մի շարք էր, որը բացահայտ կերպով դրսևորում էր հեղինակի քաղաքացիական կողմնորոշումը, նրա քաղաքական հավատամքը:

Բանաստեղծաշարն ավարտվեց: Շեշենկոն այնտեղ ներդրել էր ստեղծագործողի իր մեծ վարպետությունը, հեղափոխական-դեմոկրատի իր ողջ հնարամտությունը, տքնել էր հոգու ամբողջ ուժով:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 20-ին, Շեշենկոն գրեց «Փոքրիկ Մարիանային» քնքուշ բանաստեղծությունը: Թվում է, թե նա արդեն սպառեց իր ասելիքը «Դավթի սաղմոսներում» և անցավ ուրիշ թեմաների:

Դեկտեմբերի 21-ին գրեց «Փոխվում են ցերեկները, փոխվում գիշերները» անվերնագիր քնարական բանաստեղծությունը, ուր անհուսույթյան նոտաներ կան: Տխրությունը պատճառաբանված է ոչ անձնական, այլ հասարակական հանգամանքով:

Սարսափելի է ընկնել շղթայված,

Մեռնել անազատության մեջ...

(Страшно власти у кайдани,

Умирать в неволи...)

Նորից շղթաներ, անազատություն... Բանաստեղծի միտքը, երևում է, չի հեռացել «Դավթի

սաղմոսների» ընդհանուր տրամադրությունից:

Մեկ օր անց, դեկտեմբերի 22-ին, գրեց «Երեք տարիներ» („Три літа“) ընդարձակ բանաստեղծությունը: Սա, ըստ էության, նախորդի տրամադրության շարունակությունն է, այն տարբերությամբ, որ այստեղ, վերջավորության մեջ, բարձրանում է հասարակական մեծ թեման, որպես հարցում՝ ի՞նչ է բերելու նոր տարին Ուկրաինային: Հեռանում է հեզնական պատասխանը.

«Բարեգործություններ՝

Նոր հրամանագրով պարուրված»:

(«Благоденстви ̅ указом

Новеньким повите».)

Շեշենկոն մնում է Շեշենկո: Նրա միտքը շարունակ քաղաքական ընդհանրացումների որոնման մեջ է: Նրան տանջում են մտքից չհեռացող պատկերները՝ անազատ իրականությունը, շղթաները, հատուցման անհրաժեշտությունը: Եվ սրբանք սոսկ բանաստեղծական պատկերներ չեն, այլ մշտական տրամադրություն, ամենօրյա մրտասեւեռման, հոգեկան մշտակայուն վիճակի արտահայտություն: Այս պատկերները բխում են մեկը մյուսից և պայմանավորում են իրար: Դրբանք նույն դադափարի բաղկացուցիչ տարրերն են: Վերջին երկու-երեք օրերի ընթացքում, ֆիզիկապես տկար ու հիվանդ լինելու պատճառով, Կորզարը չի կարողանում խուսափել հրաժեշտի ա-

կորզներից: Մեռնելու, կյանքից գնալու միտքը սկսել է հաճախ այցելել բանաստեղծին: Բնական է, որ տարեվերջյան օրերն էլ իրենց հերթին բերում են կյանքի անցողիկության և թախծոտության տրամադրություն:

Գեկտեմբերի 23-ն ու 24-ը շեն հիշատակված օրեք բանաստեղծության ներքո: Հավանաբար այդ օրերին է հիվանդ բանաստեղծը վճռնիշշաչից տեղափոխվել Պերեյասլավ:

Իսկ դեկտեմբերի 25-ը պատմության մեջ մտավ մի փոքրիկ բանաստեղծությամբ, որը հանդիսացավ Շեքսպիրի ամենաբուռն խոհերի, ամենաբուռն գաղափարների ամենաբացահայտ, ամենաներդաշնակ և ամենահզոր արտահայտությունը:

Այդ բանաստեղծությունը ճայթեց որոտնդոստ, երկինքն ամբողջությամբ պատառող կայծակի նման: Նրա հսկայական ուժը կուտակվել էր մաս առ մաս՝ լիցքավորվելով հատկապես «Դավթի սաղմոսներում», որոնք նրա համար հրաշալի նախերգանք եղան:

Բանաստեղծի երևակայությունը նրան նորից ստիպել էր խորհել իր մահվան մասին: Եվ ահա նա ժողովրդին տալիս է իր վերջին պատգամը.

Ներ ու մեռնեմ, ինձ կրաղեֆ  
Մի բարձրադիր տեղում,

Իմ սիրելի ուկրաինական  
Անծայր տախտանում...\*

(Як умру, то похвайте  
Мене на могилі,  
Серед степу широкого,  
На Вкраїні милій...)

*Սա միանգամայն բնական ցանկություն էր,  
որն անմիջապես վեր էր ածվում Կորզարին հատուկ  
հայրենասիրության: Նա կամենում էր բարձունքի  
վրայից նույնիսկ հետմահու տեսնել հայրենի հե-  
ռաստանները, կամենում էր,*

Որ ես տեսնեմ մեր դաշտերը,  
Գնեպրի ամեն մի ոլորան,  
Որ լսեմ ո՛նց է ուրտում  
Մեր գետն անկախաձայն:

(Щоб лани широкополі,  
І Дніпро, і кручі  
Було видно, було чути,  
Як реве ревучий.)

*Բայց միայն այսքանը բանաստեղծին մխի-  
թարություն բերել չէր կարող: Նրա երազանքն էր,  
որ մայր դևորը թշնամու արյունը երկրից սրբի ու  
տանի ծով: Այ, այդ ժամանակ բանաստեղծը կը-  
թողի Է ամեն բան և կթռչի ասածու մոտ՝ նրան ա-  
ղօթելու: Իսկ մինչև այդ...*

\* Մեջբերվում է իմ թարգմանությունից — Մ. Հ.:



Իսկ մինչև այդ ևս ասարծուն  
Հավատացողը շեմ...

(...а до того

Я не знаю бога.)

Աստծու գոյության ընդունումը պայմանավորվում էր հայրենի երկրի ազատությամբ: Սա անողորմ ամբողջական էր աստծուն, քաղաքացիական անօրինակ խիզախություն: Բայց այսքանով էլ չէր բավարարվում բանաստեղծը: Նա մի կրտսերի շրջադարձով ավարտում է իր քնարական զեղումը և անդրադառնում ժողովրդի անելիքին: Կորդարը քանիցս արդեն հուշել է այդ անելիքը մանավանդ «Դավթի սաղմոսներում». դա անազատությունը ջարդելն է, ազատություն ձեռք բերելը: Կորդարը հենց դա էլ պատգամում է ժողովրդին, որպես իր վերջին կամք.

Թաղեցե՛ք ինձ ու վեր կացե՛ք,  
Կտե՛՛ք ամեն կապանք,  
Թշնամու արյա՛մբ ցողեցե՛ք  
Ազատությունը քանկ:

(Поховайте та вставайте,  
Кайдани порвіте  
І вражою злою кров'ю  
Волою окропіте.)

Շղթաները խորտակելու և ազատություն ձեռք բերելու պատկերը, որը նույնպես ծանոթ է Կորդարի «Դավթի սաղմոսներից», բարձրանում է նոր

աստիճանի՝ ստանալով բացահայտ քաղաքական  
սլաքարի կոչի իմաստ: Նոր աստիճանի է հասնում  
նաև «Դավթի սաղմոսներին» եկող կորզարյան մի  
ուրիշ հրաշալի սլառներ՝ ապագա հասարակության  
և ժողովրդի խաղաղ ու մեծ ընտանիքի վերաբեր-  
յալ:

Կրագավորի խաղաղ տանը,

Այն մեծ ընտանիքում...

(Воцариться в дому тихих,

В сем'ї тії великій...)

Այժմ այս սլառները հնչում է նոր ուժով, նոր  
բովանդակությամբ, և ինքը՝ մեծն Կորզար Շեչեն-  
կոն ևս շեշտում է դա, այդ ընտանիքը կոչելով ոչ  
միայն մեծ, այլև՝ ազատ և նոր:

Եվ նոր ու մեծ ընտանիքում՝

Արդեն ազատ և գոհ,

Չմոռանալ դուր ինձ հիշել

Խաղաղ անչար խոսքով:

(I мене в сем'ї великій,

В сем'ї вольній, повій,

Не забудьте пом'янути

Незлим тихим словом.)

Մինչև մեր հոգու խորքը մեզ հուզող այս  
սուղերում կա անսահման հավատ՝ ժողովրդի ա-  
զատ ու նոր ապագայի հանդեպ: Այդ հավատով էլ  
մեծ բանաստեղծն ավարտում է իր խոսքը, փայ-

փաշելով մի համեստ ցանկություն՝ այն, որ իրեն հիշեն «խաղաղ, անշար խոսքով» («НЕЗЛИМ ТИ-ХИМ СЛОВОМ»): Մարդկայնության, բարության այս ափորդը նույնպես գալիս է կողբարյան «Դավթի սաղմոսներից» և կողբարյան ուղենիշ պատկերներից մեկն է: Անշար աշխարհի ափորդով էլ ամփոփվում է Կողբարի այս հանճարեղ բանաստեղծությունը, որը պատմության հավերժական ուղեկիցը դարձավ «Կտակ» («Заповит») խորագրով:

Մեծ բանաստեղծի կերտած այս նոր հրաշալիքը կարող էր համեմատվել միայն բնության ամենահզոր երևույթների հետ՝ փոթորկի, շանթ ու կայծակի, ծովալին իններորդ ալիքի, վեղուվյան հրաբուխի և այլն: Ժողովուրդն այդպես էլ ընկալեց իր մեծ զավակի վսեմ խոսքը, որը, բարեբախտաբար, նրա վերջին խոսքը չեղավ: Հանճարեղ բանաստեղծի կյանքը շարունակվեց: Շարունակվեց նրա մեծ գործը:

Միայն բնորոշ է, որ «Կտակը» գրելուց հետո, այսինքն 1845 թվականի դեկտեմբերի 25-ից հետո, երկար ժամանակ, ավելի ստույգ՝ յոթ ամիս շարունակ, Շեչենկոն ոչինչ չգրեց: Նրա հոգու հբարուխն ամբողջությամբ գործել էր: Ասելիքն ասված էր լրիվ, առանց մնացորդի, ասված էր հանճարեղորեն:

Ամեն փոթորիկ ի վերջո հանդարտում է: Յոթամսյա իր հանդարտության ընթացքում Տա-

րաս Շեչենկոն զբաղվեց իր պաշտոնական պարտականությունների կատարմամբ (նա հնագրագիտական հանձնաժողովի աշխատակիցներից էր), ճամփորդեց գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, հանդիպումներ ունեցավ հին ու նոր բարեկամների հետ, ծրագրեր մշակեց և այլն: Իհարկե, նաև ծառայեց իր երկրորդ մուսային՝ գեղանկարչությունը, որին մշտապես հավատարիմ էր իր տաղանդի ամբողջ ուժով:

1846-ի հուլիսին, Կիևում, Շեչենկոն վերսկսեց իր բանաստեղծական գործունեությունը: Հուլիսի 25-ի ամսաթիվն է կրում նրա «Լիլեյա» («Лилея») ստեղծագործությունը:

Բոլորի աչքում Տարասն արդեն ավելի մեծ էր, ավելի սիրելի ու հարազատ: Շուտով ամբողջ Ուկրաինան լցվեց «Կտակի» հոգեխոսով խոսքերով ու հնչյուններով:

«Դավթի սաղմոսները» շարքը եղավ մի արդյունավետ անցման շրջան, մի կարևոր նախանվազ՝ գալիք մեծ ու անմահ սիմֆոնիայի համար: Այդ սիմֆոնիան հանդիսացավ «Կտակը», որը կարելի է համարել համաշխարհային պոեզիայի ամենաթանկագին մարգարիտներից մեկը: Նրա խեցին գոյավորվեց հեղինակի նախորդ ստեղծագործությունների բնգերքում՝ իր մեջ հավաքելով նրա հանճարի ամբողջ ավիշը: Այս մարգարիտը իր ամբողջ շքեղությամբ ու փայլով վաղուց դարձել է ազատաբաղձ ժողովուրդների ամենասիրելի

ստեղծագործություններից մեկը: Տարաս Շեչեն-  
կոչի անունը հիշվում է ոչ միայն խաղաղ անչար  
խոսքով, այլև երախտագիտության, սիրո և ակ-  
նածանքի ամենախոր դրսևորմամբ:

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

15 փետրվարի 1987

## ՍԵՂԱ ԱՄԻՐՅԱՆ

### ՇԵՎՉԵՆԿՈՅԻ «ԿՏԱԿԸ» ՀԱՅԵՐԵՆ

Համաշխարհային գրականության պատմությանը «Կտակի» բաղմամբիվ օրինակներ են հայտնի. Հորացիոս, Վիրյոն, Բերանժե, Դերժավին, Պուշկին, բայց Շեչենկոյի «Կտակը» դրանց հետ Բնդհանուր քիչ բան ունի: Հեղինակը պոետական ձևով հռչակում է գյուղացիական հեղափոխության գաղափարը, որը նա համարում է ժողովրդի ազատագրման միակ ճիշտ ճանապարհը.

Поховайте та вставайте,  
Кайдани порвіте  
І вражою злою кров'ю  
Волю окропіте...

Այս փոքրիկ բանաստեղծությունը գրվել է 1845 թ. դեկտեմբերի 25-ին՝ ծանր հիվանդ պոե-

տի կողմից, որը, կյանքին հրաժեշտ տալով, մտածում էր ամենամիլիոնական բանի՝ հայրենիքի մասին, նրա տափաստանների, անդաստանների, նըրա «գերեզմանների» և «աղմկող» Դնեպրի, մարդկանց ազատության և եղբայրության մասին: Ե՛վ նրա խռովարար մարտակոչն ուղղված աստծուն, որին պոետը չի ուզում և չի կարող ճանաչել, քանի դեռ չի իրականացել նրա երազանքը, և՛ «ժողովուրդների նոր, ազատ ընտանիքը» տեղավորվել են այս հանճարեղորեն պարզ, խիստ հակիրճ ստղերում՝ դառնալով քաղաքական լիրիկայի բարձր օրինակ: Ու թեև ինքը՝ պոետը «Երեք տարի» ձեռագիր տետրում «Երբ որ մեռնեմ, ինձ կթաղեք...» ստղերը գրել է առանց վերնագրի, ժողովուրդն ընդունեց և իմաստավորեց այն ինչպես կտակ, և այդ վերնագրով էլ բանաստեղծությունը հայտնի դարձավ ամբողջ աշխարհին:

Առաջին հայ ընթերցողները՝ Կիևի և Լվովի բնակիչները, Մոսկվայում և Պետերբուրգում սովորող երիտասարդությունը, «Կտակի» և Շեչենկոյի այդ տարիների այլ «խռովահույզ» ստեղծագործությունների հետ, որոնք պոետի կենդանության օրոք չէին հրատարակվել ուսսական միապետության սահմաններում, ծանոթանում էին ձեռքից ձեռք փոխանցվող ձեռագրերի միջոցով: Իսկ ուղիղ հարյուր և տասը տարի առաջ «Կտակը» թարգմանվեց հայերեն: Մինչ այդ այն հրապարակվել էր «Դումկա» («Խոհ») վերնագրով «Պուշկինի և

Շեշենկոյի նոր բանաստեղծությունները» գրքում, հրատարակվել էր Լալայցիգում 1859 թ.: Իսկ Շեշենկոյի մահից վեց տարի անց՝ 1867 թ., Սանկտ-Պետերբուրգում լույս տեսած «Կորզարում» առաջին անգամ «Կտակը» վերնագրով տպագրվեց բանաստեղծության առաջին ութ տողը: Հենց այդ ութ տողն էլ թարգմանվեց Քերովբե Քուշներյանի կողմից և հրատարակվեց վենետիկյան Մխիթարյանների «Բաղմավեպ» ամսագրում:

Այս հանգամանքը, սակայն, չի նշանակում, թե «Կտակի» հայ առաջին թարգմանիչը շուներ բանաստեղծության լրիվ տեքստը: Ընդհակառակը, բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Քուշներյանը կարող էր օգտվել «Կորզարի» Պրագայում հրատարակված երկհատորյակից, որի երկրորդ հատորում տեղ էին գտել այն ստեղծագործությունները, որոնք Ռուսաստանում արգելված էին կամ խիստ կրճատված, այդ թվում և «Կտակը»: Բանն այն է, որ 1879 թ., «Բաղմավեպում», Շեշենկոյի ծննդյան 65-ամյակի առթիվ հրատարակված՝ Քուշներյանի «Թառաս Շեշենկո—ազգային բանաստեղծ Փոքր—Ռուսաց» ծավալուն հոդվածը, որում էլ հենց տեղ էին գտել մեծ պոետի նրա թարգմանությունները, գրվել էր ֆրանսիացի գրող Էմիլ Դյուրանի համանուն հոդվածի հիման վրա, որը հրատարակվել էր „Révue des deux mondes“ ամսագրում (1876, № 15): Իսկ վերջինս էլ փաստորեն «Կորզարի» Պրագայի հրատարա-



կության գրախոսականն էր և այնտեղ, բնականաբար, մատնանշվում էր այդ հրատարակութչունը, որի հետ մեր թարգմանիչը, իհարկե, ծանոթ էր: Եվ այնուամենայնիվ, նա իր թարգմանության մեջ բաց էր թողել բանաստեղծության հեղինակի մարտահրավերը աստծուն և հեղափոխական ապստամբության նրա կողքը, որ փաստորեն նըշանակում էր գոյություն ունեցող իրավակարգի տապալում: Սա կարելի է բացատրել տարբեր պատճառներով. Քուշներյանի պատկանելությամբ կաթոլիկ Մխիթարյանների կոնգրեգացիային, նըբանց ընդհանուր մամուլի օրգանի ուղղվածությամբ և այն հանգամանքով, որ թարգմանիչը ապրում էր Ղրիմում, ռուսական միապետության ւահամաններում (ծնունդով Կարասուբազարից էր, երկար տարիներ ապրել է Ֆեոդոսիայում): Հետաքրքիր է նշել, որ է. Դյուրանն էլ իր հողվածում մեջ էր բերել «Կտակի» հենց այդ ութ տողը, սակայն արձակ շարադրանքով:

Եվ այնուամենայնիվ, Քուշներյանն իր հողվածում ավելի «համարձակ» էր և, խոսելով Շևչենկոյի պոեզիայի գաղափարական բովանդակությամբ և այն հանգամանքով, որ թարգմանիչը մեծագոյն մասը կ'ազդեն գութ և գորով առ տկարըս և ընկճեալս, միև կողմանէ կամ հակառակէն՝ ատելութիւն առ հարստահարիչս»: Ինչ վերաբերում է «Կտակի» հեղինակին, նա բնութագրվում է հետևյալ կերպ. «... Շեվչենքո լոկ ժողովրդական

երգիչ շէ, այլ բանաստեղծ կամ քերթողահայր ամբողջ ազգի մը. այս պատճառով նորա անձը, կերպով մը մագնիտ դարձած է, և իրեն կը քաշէ բոլոր Փոքր—Ռուսաց սրտերը. և որովհետև արդէն այդ սրտերը միով լեզուաւ իրարու կապուած են, այդ հասարակաց կապը կը տանի զնոսա գէպի Շեվչենքո, որ կեդրոնն է ազգութեան իւր Քոպպարով: Այս գրքիս մէջ բանաստեղծս համառօտ պատուէր մը գրած է, որով կը յանձնէ որ մեռնելէն վերջը մարմինը թաղեն Տնեբերի եղերք բարձրացած խորհրդական բլուրներէն մէկուն վրայ»<sup>1</sup>: Իսկ գրան հաջորդում էին զրիմահայոց լեզվով, որ մոտ էր արեւմտահայերենին, Քուշներյանի թարգմանած «Կտակի» առկերը.

Թաղեցե՛ք զիս, մեռնելէս վերջ  
 Լայն արձակ դաշտի մը մէջ.  
 Զի գերեզմանս պէտք է ըլլայ  
 Յիմ սիրական Ուրայինս:  
 Դաշտեր երկիր ցոբենաբեր,  
 Ծեր Տրենբերն, նորա քրմբեր  
 Թո՛ղ տարածուին իմ շորս դին,  
 Խոխոջք գեառյն պէտք է լքուին:

Մեկնաբանելով թարգմանված տողերը, Քուշներյանը գրում է. «Արդեօք այս մի պարզ փափաք է, մայրենի երկրին ծոցն հանգչելու, շրջապատեալ ՚ի հայրենեաց, ՚ի քուն յաւիտինական: Ոչ, այլ կը նախագուշակէ բանաստեղծս, որ իւր անունը քանի երթայ պիտի մեծանայ, և իւր գերեզ-

մանը հասարակ մահկանացուաց շիրիմներուն պէս աննշան և անհետք պիտի շիրորլի. գրած է ար-պէն ինքն. «Իմ կենաց պատմութիւնս պիտի գրաւէ ժամանակին իմ հայրենի աշխարհիս պատմութեան մէջ նշանաւոր էջ մը»: Եվ Քուշներջանը եզրակացնում է. «Չսխալեցաւ Շեվչենքո, ճիշդ է մտածութիւնը: Այսօրուան օրս արդէն անցաւ 17-ներորդ տարին մահուն. նորա գերեզմանը գրեթէ ուխտատեղի մը դարձած է համօրէն Փոքր—Ռուսաց համար»<sup>2</sup>:

Ինչպէս կարելի է համոզվել, Քուշներջանի թարգմանությունը բանաստեղծական է և համապատասխանում է բնագրին: Ծանոթ լինելով ուկրաիններենին՝ թարգմանիչը շափազանց հարազատ է մնացել բնագրին՝ ավելացնելով միայն երկու մակդիր՝ «ծեր» («Գնեպրին») և, «ցորենաբեր» («գաշտերին»): «Շեղում» է նկատվում նաև բնագրի հանգավորման հերթականությունը արտահայտելու մեջ: Բնագրում հանգավորվում են երկրորդ և չորրորդ տողերը, Քուշներջանի թարգմանության մեջ՝ առաջին և երկրորդ, հետևաբար՝ երրորդ և չորրորդ: Այսպիսով, հեղինակը մտցրել է լրացուցիչ հանգավորում՝ հասնելով հայկական տեքստի առանձնահատուկ երաժշտականության:

Յավոք, թե՛ Քուշներջանի հողվածը, թե՛ նրա թարգմանությունը քիչ էին հայտնի Հայաստանում, իսկ հետո էլ վաղեմության հետևանքով լրիվ մոռացվեցին: Այսպիսի պնդումը մենք պատճառա-

րանում ենք հետևյալ փաստով, որ քաղվել է Յու. Վեսելովսկու արխիվից: 1911 թ. Շեչենկոյի մահվան 50-ամյակի կապակցությամբ Վեսելովսկին գիմում է հայ գրող և պատմաբան Լեոյին՝ ուկրաինական մեծ բանաստեղծի հայերեն թարգմանությունների մասին տեղեկություններ պարզելու համար: Եվ ստանում է հետևյալ պատասխանը՝ 1911 թ. փետրվարի 23-ով թվագրված.

«Ողորմած պարոն Յուրի Ալեքսեևիչ.

Ի պատասխան Ձեր նամակի հաղորդում եմ, որ ո՛չ ինձ, ո՛չ իմ բնկեր գրողներին հայտնի չէ Շեչենկոյի որևէ թարգմանություն հայ գրականություն մեջ:

Խնդրում եմ ներել ինձ պատասխանս ուշացելու համար: Ես երկար ժամանակ չէի համարձակվում Ձեզ հայտնել միայն իմ անձնական հետազոտությունները, ուզում էի հարցնել բոլոր գրողներին, որովհետև անհավանական էր թվում, որ Շեչենկոն հայերեն լեզվով բնագահնրապես չի թարգմանվել: Սակայն պարզվեց, որ մյուս գրողներն էլ Շեչենկոյի հայերեն թարգմանություններ չգիտեն: Եթե դա լիովին համապատասխանում է իրականությանը, եթե ինչ-որ տեղ չկա ինչ-որ մի մոռացված թարգմանություն, ապա սա պիտի բացատրի Շեչենկոյի լեզվի անմատչելիությամբ:

Պատրաստ եմ Ձեզ ծառայել, Ձեզ անկեղծորեն հարգող Լեո»<sup>3</sup>:

«Կտակի» հայերեն երկրորդ թարգմանությունը հայտնվեց 1914 թվականին: Այն կատարել էր հայտնի հայ մանկագիր Աթաբեկ ինկոյանը, որ ստորագրում էր «Խնկո-Ապեր» գրական կեղծանունով: Այդ թարգմանությունը նրա «Անմոռանալի Տարասը» հոդվածի և Շեչենկոյից կատարած երկու այլ թարգմանությունների հետ միասին ղետեղվեց «Հասկեր» մանկական ամսագրում, որ հրատարակվում էր Թիֆլիսում: Խնկոյանի թե՛ թարգմանությունները, թե՛ հոդվածը հասցեագրված էին պատանի ընթերցողներին և դրա համար էլ տեքստերը պարզեցված էին, հարմարեցված մանկական ընկալման համար:

«Կտակի» ինկոյանի թարգմանությունը նույնպես կիսատ է: Այստեղ էլ բաց են թողնված հեղափոխական կոչ պարունակող «կրիմինալ» տողերը: Ճշմարիտ է, բացի առաջին ութ տողից ինկոյանը թարգմանեց նաև վերջին քառատողը՝ հանելով «ազատ» և «նոր» բառերը, քառատողին տալով բավական անմեղ տեսք.

Գալ օրերի սիրով կապված  
Բնտանիքում մեծանուն  
Ինձ էլ յիշե՛ք ֆաղցր խոսքով,  
Իմ եղբայրներ սիրասուն:

Յարական գրաքննության խստագույն պայմաններում հավանաբար այսպես էր հնարավոր թարգմանել «Կտակի» «վտանգավոր» տողերը: Որ-

պէս ապացուցց կարող են ծառայել մինչհեղափոխական ուսերեն տասնմեկ թարգմանություններ, որոնք բոլորն էլ տպագրվել են կրճատված:

Շեշենկոյի «Կտակը» ամբողջութեամբ հայերեն թարգմանվեց միայն խորհրդային տարիներին: Գոյություն ունի այդպիսի վեց թարգմանություն, որոնք կատարել են ճանաչված հայ բանաստեղծները: Գրանցից շորսը հրատարակվել են մինչհոբելյանական և հոբելյանական 1939 թվին: Թարգմանություններ կատարել են Գեղամ Սարյանը (1936 թ.), Նաիրի Զարյանը (1936 թ.), Աշոտ Գրաշին (1938 թ.) և Բաբկեն Կարապետյանը (1939 թ.):

Իհարկե, «Կտակի» հայ թարգմանիչների առաջ հայանի բարդություններ էին առաջանում: Թվում է, թե դժվար չէր վերարտադրել բանաստեղծութեան պարզ, նրբակերտ տողերը, որոնք առանց ավելորդ դժվարութեան պիտի հարմարվեն նույնիսկ ուկրաիներենից այդքան հեռու հայերենի շափանիչներին: Բայց Շեշենկոյի բանաստեղծական ոճը հենց այն բանով է անկրկնելի, որ պարզագույն բառերից և դարձվածքներից նա ստեղծել է զգացողական ազդեցութեան հսկայական ուժ ունեցող գեղարվեստականորեն կատարյալ ստեղծագործություն: Խոր զգալով մայրենի լեզվի պոեզիան, բառի հասարակական, զգացողական և գեղարվեստական գործածությունը՝ նա կարողանում էր նույնիսկ քաղաքական պաթոսով վառ արտա-

հայտված բանաստեղծություններում հասնել գեղարվեստական ընդհանրացման:

Ոչ միայն վերարտադրել հեղափոխական գաղափարայնությունը, «Կտակի» պաթոսը, այլև նրա պոետականությունը, ժողովրդայնությունը, ազգային կոլորիտը, հանգանքաժշտականությունը, այսինքն այն ամենը, ինչ կազմում է բնագրի գեղեցկությունը և ուժը. ահա այն խնդիրը, որ կանգնած էր Շևչենկոյի բանաստեղծությունների յուրաքանչյուր նոր հայ թարգմանչի առջև: Եվ նրանցից յուրաքանչյուրը այդ խնդիրը լուծում էր յուրովի՝ հլնելով իր պոետական ոճից՝ համապատասխան իր թարգմանական յուրահատկությունը: Եթե թարգմանիչներից ոմանք ձգտում էին հասնել բնագրի գաղափարական և գեղարվեստական արտահայտչականությանը, թարգմանելով ազատ, զիմելով լրացուցիչ բառային նյութի, նոր պատկերների և մակդիրների, ապա մյուսները նույն նպատակը հետապնդելով՝ մնում էին հիմնականում Շևչենկոյի բառապաշարի սահմաններում՝ պահպանելով նրա տողային պատկերները և երաժրշտականությունը:

Համեմատելով խորհրդային առաջին թարգմանությունները, գեղարվեստական վարպետության տեսակետից, պետք է ընդունենք, որ լավագույնը Սարյանի թարգմանությունն է, որն էլ հենց տեղ է գտել «Կորզարի» հայերեն երեք հրատարակություններում, ինչպես նաև՝ «Ուկրաինական

բնար» (1954) և այլ ժողովածուներում: Դա հասկանալի է, քանի որ Սարյանը Շեչենկոյի պատահական թարգմանիչներից չէ, նրան են պատկանում Ուկրաինայի մեծ բանաստեղծի պոետական ժառանգության զգալի մասի հայերեն թարգմանությունները:

Սարյանի թարգմանությունը շափաղանց մոտ է «Կտակի» բնագրին, նրանում պահպանված են Շեչենկոյի բանաստեղծության առանձնահատուկ տարրեր՝ բառապաշարը, տողերի դասավորությունը, հանգը և նույնիսկ Շեչենկոյի բանաստեղծական տեխնիկայի մի այնպիսի կարևոր առանձնահատուկություն, ինչպես արիտերացիան: Այսպես, առաջին տողերի լ-ով ականջը շոյոզ շեչենկոյական հնչակապակցությունը (МОГИЛІ, МИЛІИ ШИРОКОПОЛІ և այլն) նա արտահայտում է հայկական լեզվի միջոցներով՝ «Զ» աֆրիկատով, իսկ չ-ով հնչակապակցությունները (КРУЧИ, ЧУТИ, РЕВУЧИЙ) համապատասխանաբար հայկական շ-ով, որը նույնպես թարգմանությանը հաղորդում է ինքնատիպ երաժշտականություն.

Երբ մեռնեմ ես, քաղեցե՛ք ինձ  
Բարձր գերեզմանում,  
Տափաստանի մեջ ընդարձակ,  
Մեր Ուկրաինայում,  
Որ արտերը անծայրածիր,  
Դնեպրը հառաշուն



Ե՛վ տեսնեմ ես, ե՛լ լսեմ ես  
Ինչպես է շառաշում:

*Բնագրի հետ ազատ վերաբերվելու, նոր բաներ և սատկերներ ներմուծելու օրինակ է Նաիրի Զարյանի թարգմանությունը, թեև դա էլ յուրովի արտահայտիչ է.*

Երբ կմեսնեմ, դու՛մ քաղեցեմ  
Ինձ կուրգանի տակ այն,  
Ուր ուր հագնում է կապույտ մեգ  
Ստեպն՝ Ուկրաինական. —  
Ուր ես տեսնեմ, լսեմ հավետ  
Գնեպրի մոռնչը գոռ  
Ե՛վ արտերում երանավետ,  
Ե՛վ ավերում ոլոր:

*Բերված հատվածներում ուշադրության է արժանի ուկրաինական այնպիսի իրողությունների թարգմանության ձևը, ինչպես „МОГИЛА“, „СТЕП“ կամ „ЛАНИ ШИРОКО ПОЛІ“: Հայերենում ուկրաինական „МОГИЛА“ (այսինքն «կուրգան») հասկացության բացակայության հետևանքով Սարյանն այն թարգմանում է «գերեզման» բառով, նրան տալով «բարձր» մակդիրը: Եթե դա ամբողջությամբ էլ չի համասարտասխանում բնագրին, ապա հայ ընթերցողի մոտ զուգորդվում է մի բարձունքի սատկերի հետ, որտեղ կցանկանար հանգչել բանաստեղծը: „СТЕП“ -ը նա թարգմանում է հայերեն*

«տափաստան» իսկ ժողովրդաբանաստեղծական «ԿВНИ ШИРОКОПОЛІ»-ին՝ «արտերը անծայրածիր»։ Իսկ Զարյանը, հավանաբար ցանկանալով ուկրաինական իրողությունները հայ ընթերցողի համար հասկանալի դարձնել, «МОГИЛА»-ն թարգմանում է «կուրգան», իսկ «СТЕП»-ը պահպանում է նույնությամբ, այսպիսով սուսականացնելով տեքստը։

Հետաքրքրական է, թե ինչպես են ձևափոխվում այդ հասկացությունները այլ թարգմանիչների մոտ։ Ա. Գրաշու մոտ «МОГИЛА»-ն արված է ինչպես Սարյանի մոտ՝ «գերեզման» բառով, իսկ Բ. Կարապետյանի մոտ՝ «վեհ բարձունքով»։ Նրկու թարգմանիչներն էլ նույնությամբ են թողնում «СТЕП» բառը։

Նշված թարգմանություններում հանդիպում են նաև որոշ անճշտություններ, որ պայմանավորված են ոչ լրիվ հասկանալի ուկրաինական արտահայտություններով։ Այսպես, օրինակ, Գրաշու մոտ «ВОЛЮ ОКРОПИТЕ» բառերը թարգմանված են «աղատություն կոփեք» արտահայտությամբ, իսկ Բ. Կարապետյանի մոտ բոլորովին այլ է՝ «կամքերը կոփեցեք»։ Ընդհանուր առմամբ այս թարգմանությունները որոշակի արժանիքներ ունեն, քաղաքական պաթոսի, տրամադրության, ինտոնացիայի ճշմարտացի վերարտադրության, իսկ առանձին դեպքերում նաև՝ բնագրի գեղարվեստական առանձնահատկությունների։ Դրանցում վերարտա-

զրվում է բնագրի հանգավորումը (յուրաքանչյուր բառատողի երկրորդ և չորրորդ տողերը հանգավորվում են), թեև հիմնականում, հակառակ Շեչենկոյի հանգի, որը հանգավորում էր ուկրաինական լեզվի ամենաանակնկալ շերտերը (տվյալ դեպքում. МОГНЛІ-МНЛІЙ, КРУЧІ-РЕВУЧАЙ, МОРЕГОРЕ, НОВІЙ-СЛОВОМ և այլն), նրանցում հանգը ավանդական է, հաճախ էլ անհամ ու ծամծամված:

Վերջին երկու տասնամյակում հայտնվեցին «Կտակի» հայերեն ևս երկու թարգմանություն՝ կատարված Լևոն Միրիջանյանի և Սիլվա Կապուտիկյանի կողմից: Գրանք ներկայացնում են Շեչենկոյի ստեղծագործության թարգմանական պատմության մի նոր աստիճան: Այստեղ նորարարությունը նրանում է, որ այդ թարգմանություններում, ավելի առաջ, քան նախկիններում, օգտագործված են հայերենի բանաստեղծական խոսքի բառային և կերպարաարտահայտչական հնարավորությունները: Չձգտելով խստագույն ճշգրտության, հաճախ էլ նույնիսկ որոշ շափով հեռանալով բնագրից, թարգմանիչները միևնույն ժամանակ մոտենում են նրան պոետական արտահայտչականությունը և գեղեցկությունը, հեղինակի ցանկությունների և տրամագրությունների երանգով:

Լևոն Միրիջանյանի համար, որը Շեչենկոյի պոեզիայի վաղեմի և ջերմ երկրպագուն է ու նրան է նվիրել «Հողի հպարտությունը» քնարական պոեմը, բնութագրական է «Կտակի» գաղափարա-

կան ենթատեքստի ու շնչի խոր ներթափանցում  
և ճշմարիտ ըմբռնում: Նրա թարգմանություն յու-  
րաքանչյուր նոր հրատարակություն (իսկ դրանք  
երեքն են) ներկայանում է նոր մշակմամբ, հրղկ-  
ված և առավել կատարյալ:

Կապուտիկյանի և Միրիջանյանի թարգմանու-  
թյուններում ավելի թարմ է նաև հանգավորումը,  
որը համապատասխանում է Շեչենկոյի բանա-  
ստեղծական արվեստին: Միրիջանյանի մոտ, օ-  
րինակ, բանաստեղծության սկիզբը հնչում է այս-  
պես.

Երբ որ մեռնեմ, ինձ կրաղեմ

Մի բարձրադիր տեղում՝

Իմ սիրելի ուկրաինական

Անձայր տափաստանում,

Ու ես տեսնեմ մեր դաշտերը,

Գնեպրի ամեն մի ոլորան,

Ու լսեմ՝ ո՛նց է որոտում

Մեր գետն անեղածայն:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, կա լիակա-  
սար իմաստային, բառակազմական և հնչյունա-  
կազմական համապատասխանություն բնագրի  
հետ:

Սիլվա Կապուտիկյանի թարգմանություն մեջ  
«Կտակի» առաջին տողերում անակնկալ, բայց  
հաջողված հայանագործություն է «հունդ» բառի  
օգտագործումը.

Երբ ևս մեռնեմ, դու՛մ ինձ քաղեմ,  
Ինչպես հունդն ևն քաղում,  
Ի՛մ սիրելի, ի՛մ անեզերք՝  
Ուկրաինական հողում:

Բնագրի՛ նման «ոչ ավանդական» իմաստա-  
վորումը (բանաստեղծը ցանկանում է ուկրաինա-  
կան անեզր հողում թաղվել ինչպես հունդ) լիովին  
սլաոնաբանական է, եթե հաշվի առնենք Շեչեն-  
կոյի սլոնիկայի հետագա՝ «հեռոմահու» կյանքը:  
Այն իսկապես ծլեց, ինչպես առատ անդաստան,  
հանճարեղ սլոնի մտքերի և ձգտումների սերմե-  
րից ու ներաճեց հարազատ ժողովրդի և նրա  
անմահ ժառանգությանը ծանոթ մյուս ժողովուրդ-  
ների կյանքում:

Հայտնի է, որ իր երաժշտականության և ժո-  
ղովրդայնության շնորհիվ «Կտակը» հենց սկզբ-  
բից դարձավ ժողովրդական երգ: Շեչենկոյի նը-  
կատմամբ ժողովրդի խոր հարգանքը արտահայտ-  
վում է նաև «Կտակի» կատարումը հոտնկայս լսե-  
լու գեղեցիկ ավանդույթով: Բանաստեղծության  
ափսոսով ստեղծվել է մոտ քառասուն երաժշտու-  
թյուն: Հաճելի է այն փաստը, որ այդ փառավոր  
ձայնադարանի երկու երգերը ստեղծել են հայ  
երաժշտության դասականներ Քրիստափոր Կա-  
րա-Մուրզան և Ալեքսանդր Սպենդիարյանը: Ման-  
կուց ապրելով Ղրիմում, Սպենդիարյանը սիրեց  
ուկրաինական ժողովրդական գերող երգերը, հե-

առ էլ մշակեց դրանք՝ պրոպագանդելով հայերի շրջանում: Այդ մշակումների թվում առանձնանում է տղամարդկանց քառյակի համար գրված երգը՝ ստեղծված «Կտակի» ուկրաինական տեքստի հիման վրա: Այդ երգը մասնագետներին զարմացնում է ուկրաինական մեկոսի խոր և ճիշտ ըմբռնմամբ:

Շոշափենք քննարկվող թեմայի մի այլ հայեցակետ՝ «Կտակի» հնարավոր ազդեցությունը հայկական պոեզիայի վրա: Հայ ընթերցողը, որ այսօր ծանոթանում է Շեչենկոյի բանաստեղծության բնագրի կամ թարգմանության հետ, հիշում է մի այլ բանաստեղծության տողերը (առանց վերնագրի), որ պատկանում են մեր անզուգական վարպետին՝ Ավետիք Իսահակյանին.

Ես որ մեռնիմ՝ ինձ կբաղեմ  
Ալագյազի լանջերում,  
Ու Մանրաշից հովերը գան,  
Վրաս հևան ու երբան,

Գերեզմանիս շոբս դին փովին  
Ցոբեն արտերն ու ցոլան,  
Եվ ուրիներն՝ մագերն արձակ,  
Վրաս ընկնին, անուշ լան...

Գծվար չէ նկատել, որ այս բանաստեղծությունը համահնչյուն է Շեչենկոյի «Կտակի» ոչ միայն բովանդակությանը և տրամադրությունը,

այլև պատկերավորման համակարգին: Շեշենկոն  
ցանկանում էր հանգչել իր սրաին սիրելի Ուկ-  
րաինայում, լայնարձակ տափաստանում, բարձր  
գերեզմանում, որպեսզի տեսնի անկարգաշտերը  
և լսի, թե ինչպես է աղմկում Գնեպրը: Իսահակ-  
յանը նույնպես խնդրում է իրեն թաղել հայրենի-  
քում (Շիրակում), Արագածի լանջին, որպեսզի իր  
գերեզմանին հասնեն մեկ այլ լեռան՝ Մանթաշի  
բամիները, որ իր գերեզմանի շուրջը տարածվեն  
ցորենի արտերը: Հասկանալի է, որ այս երկու  
ստեղծագործությունների մոտիկությունը պայմա-  
նավորված է նախ և առաջ երկու պոետների ջերմ  
սիրով դեպի իրենց հայրենի երկիրը և ժողովրդա-  
կան արվեստի ակունքները: Իսահակյանի բանա-  
ստեղծությունը ներշնչված է մանկության հիշու-  
ղություններով, երբ ապագա պոետը օրերով թա-  
փառում էր Ալագյազի և Մանթաշի լանջերին ու  
դաշտերում՝ ուրախանալով ծաղիկներով ու արևով,  
լսելով դեպի լեռերի շշուկը և Արփաշայ գետի մեղմ  
կարկաշը: Եվ ինչպես Շեշենկոյի մոտ, Իսահակ-  
յանի մանկական երևակայությունը թևավորվում էր  
գուտանների երգերով, հին ավանդություններով,  
հայրենի երկրի բնությամբ: Իսահակյանի բա-  
նաստեղծությունը խորապես ժողովրդական է, աղ-  
պային ոճի, օժտված է մեղեդային լեզվով և պատ-  
կերավորություններով: Այն ավարտվում է Իսահակյա-  
նի նախասիրած լացող ուռենու քնքուշ կերպա-

բով, որին հեղինակը հաճախ է դիմում նաև իր այլ ստեղծագործություններում:

Սահայն Իսահակյանի «Կտակում» մի այլ պատկեր էլ կա, «ցորենի արտերի» պատկերը, որ բնութագրական շէ սարերի երկրի երգչի քնարին: Շեշենկոյի «Կտակի» հետ անմիջական զուգահեռականն այստեղ ակնհայտ է: Սա առավել ես նշանակալի է, քանի որ «Կտակի» առաջին հայ թարգմանիչ Քուշներյանը Շեշենկոյի «ЛАНН ШИРОКОПОЛІ» բառերը թարգմանել է «ցորենի արտեր» ձևով: Ինչպես երևում է Իսահակյանի հետագա գրառումներից, որոնց մեջ կան այսպիսի տողեր. «Յորենի արտերը, ձիերի վրնջյունը, Դնեպրը Ուկրաինայի պատմության հավերժ ուղեկիցներն են», «ցորենի արտերի» պատկերը Իսահակյանի մոտ անմիջականորեն զուգորդվում է Ուկրաինայի հետ, թեև այս բանը պոետը գրել է 1939 թ., Շեշենկոյի ծննդյան 125-ամյակի առթիվ:

Իսկ ծանոթ էր, արդյոք, Իսահակյանը Շեշենկոյի «Կտակին» 1898 թ., երբ գրում էր իր բանաստեղծությունը: Պատահակա՞ն են արդյոք այս զուգահեռականները Շեշենկոյի և Իսահակյանի կտակներում: Հավանաբար ոչ: Իսահակյանն իր բանաստեղծությունը գրել է 24 տարեկան հասակում, երբ արդեն «Երգեր և վերքեր» ժողովածուի հեղինակն էր: Ի՞նչն էր ստիպում երիտասարդ, արդեն փառաբանված բանաստեղծին տրբ-



վել մահվան մտքերին, ձգտել «այլ աշխարհի հե-  
ռավոր ափերին»: 1896 թ., ցարիզմի դեմ ուղղված  
գործունեության համար Իսահակյանը ձերբակալ-  
վում է և մեկ տարվա բանտարկությունից հետո  
արտոլում օգոստ, որտեղ ապրում է մինչև  
1898 թ. վերջը: Այստեղ, նույնօրեր ամսին, Իսա-  
հակյանը գրում է իր կտակը, որը սկզբնական  
տարրերակում ուներ ևս երկու տուն, որոնք հե-  
տագայում հեղինակի կողմից առանձնացվեցին  
երպես ինքնուրույն բանաստեղծություն՝ «Ես որ  
մեռնեմ ու իմ վերքից...»:

Ինչպես վկայում են Իսահակյանի օրագրային  
գրառումները, արտորում ևս նա մեծ հոգեկան  
խռովք էր ապրում: Հեղինակին ճնշում էր բնա-  
կալական կարգերի պայմաններում՝ օժտված ան-  
հատականության ողբերգական վիճակը, ուր ճընշ-  
վում և ոչնչացվում էին «և՛ ազատ միտքը, և՛  
բառը, և՛ ազատ երգը, և՛ սերը»: Չգտնելով ցան-  
կալի ճշմարտությունը («Քո հետքն ու շուքը նույ-  
նինկ շատա»), բանաստեղծը նախընտրում է իր  
սիրտը պահ տալ լեռների լանջերին, քան թույլ  
տալ, որ իր մտքերն ու զգացմունքները դառնան  
այս «ստրկամիտ ու փառամոլ աշխարհի» բռնու-  
թյան առարկա: Եվ բանաստեղծի մոռյլ մտո-  
րումներում, թե որտեղ կավարտվի նրա կյանքի  
ճանապարհը, որտեղ կգտնի նա իր «վերջին հան-  
գրովանը», միշտ հնչում է հայրենիքի թեման: Այդ  
տրամադրություններն էլ նա արտահայտել է ան-

խորագիրը կտակում և մի շարք այլ ստեղծագործություններում: Այդտեղ դեռ Շեչենկոյի ազատության և պայքարի կոչը չկա, կհայտնվի ավելի ուշ, 1903—1905 թթ. գրված բանաստեղծություններում («Ազատության Ձանդ»: «Հիմա հետավոր: Կե՛հ Հիմալայում», «Անհուն վրեժի և ամեյություն...»):

Օգեսայում Իսահակյանը չի դադարեցնում իր ստեղծագործական գործունեությունը: Այստեղ է նա գրել իր քնարական գլուխգործոցներից մի քանիսը, այստեղ էլ հենց ծանոթացել է ուսական և ուկրաինական գրական կյանքի խոշոր երեւոյթներին: Ինչպես հիշում է բանաստեղծը, Օգեսայում նա առաջին անգամ լսել է Գորկու անունը և ծանոթացել «հեղափոխության մրրկահավի» ըստեղծագործությանը: Հնարավոր է, որ Օգեսայում է Իսահակյանը ծանոթացել Շեչենկոյի հեղափոխական ստեղծագործություններին (եթե ծանոթ չէր նրանց նախկինում), մասնավորապես՝ «Կտակին»: Այդ թարմ տպավորություններով էլ Իսահակյանը գրել է իր կտակը: Համենայն դեպս հայտնի է, որ աքսորից մի քանի տարի անց, 1904 թ. մայիսի 4-ին նա ձեռք է բերում Շեչենկոյի «Կոբզարի» 1900 թ. ուսերեն հրատարակությունը Ի. Բելտուսովի կենսագրական ակնարկով: Իսահակյանը ուշագիր ընթերցում է այդ գիրքը՝ նշումներ թողնելով լուսանցքներում: Հիմա այդ գիրքը, Շեչենկոյի շատ այլ հրատարակություն-

ների և նրա մասին հիշողությունների հետ, պահպանվում է Իսահակյանի թանգարանում: Ինչպես վկայում են նշումները, հայ մեծ բանաստեղծը բարձր էր գնահատում Շեչենկոյի պոեզիան, հիանում էր նրա քաղաքացիական արիությանը: Հետագայում, ինչպես հայտնի է, նա ջերմ սիրով էր խոսում Ուկրաինայի մեծ բանաստեղծի մասին, նրան անվանում «սիրելի Շեչենկո», «Ուկրաինայի զինված մարզարե»: Իսահակյանը դրել է «Կուրվարի» հայկական հրատարակության առաջաբանը:

Բերված փաստերը ստիպում են մտածել, որ Իսահակյանի նշված բանաստեղծությունը ներշնչված է Շեչենկոյի «Կտակով»: Երկու մեծ բանաստեղծների ստեղծագործական մոտիկությունը հավանաբար նկատել են Իսահակյանի ժառանգության թե՛ ուս, թե՛ ուկրաինացի թարգմանիչները: Այսպես, Բլոկը իր թարգմանության մեջ, ձգտելով հեռանալ Շեչենկոյի հանրահայտ տողերից, մտադրված ձևափոխել է Իսահակյանի բանաստեղծության սկիզբը՝ մի փոքր խախտելով հանգը.

Схороните, когда я умру,  
На уступе горы Алагяза,  
Чтобы ветер с вершин Мангаша  
Налетал, надо мною дыша...

Այս թարգմանությունը իհարկե զիջում է բրնազրի առաջին տողին:


Ինչ վերաբերվում է վ. Սոսյուրայի ուկրաիներեն թարգմանությունը, նա էլ ավելի է հեռացել ընդհանուր, քան Բլոկը: Դրա համար էլ, ընդհանուր առմամբ լավ թարգմանությամբ հնարավոր չէ դատել երկու կտակների մոտիկության մասին.

Мене по смерті схоронить  
На Алагяза схилах,  
Щоб слухав шум я з верховітє  
Вітрів отчизни милих...


Այստեղ մենք լուկ շոշափեցինք մի հետաքրքիր և մեծ թեմա «Շեչենկո-Իսահակյան», որն արժանի է առանձնակի հետազոտության: Ի դեպ, երկու ժողովրդական մեծ բանաստեղծների մոտիկությունը արդեն գրավել է հետազոտողների ուշադրությունը: Մի առիթով, Իսահակյանի մասին խոսելիս, Շեչենկոյի պոեզիայի հիանալի գիտակ և թարգմանիչ Ալեքսանդր Դեյչը նկատել է. «Նա կարող էր Տարաս Շեչենկոյի բառերով ասել. «Իմ կյանքի սլատմությունը իմ հայրենիքի սլատմության մի մասն է»<sup>4</sup>:


Ժամանակին Իվան Ֆրանկոն, մեջբերելով «Կտակի» «Поховайте та вставайте...» սողերը, գրել է. «Մենք մարգարե չենք և չենք կարող իմանալ՝ կիրականանա՞ր արդյոք Շեչենկոյի խոսքը, կարողացե՞լ է արդյոք մեծ բանաստեղծը իր զգացմունքի ուժով գուշակել մեր ապագայի մեծ հանելուկը»<sup>5</sup>:

Իրականացավ Տարաս Շեչենկոյի համեստ  
ցանկութիւն-խնդրանքը՝ ժողովուրդները բանաս-  
տեղծին հիշում են «բարի խոսքով»: Դրա ապա-  
ցույցն են նաև նրա հանճարեղ «Կտակի» հայերեն  
ութ թարգմանութիւնները:



*Handwritten text in a cursive script, possibly a signature or a name, written diagonally across the page.*





Էջ. 7 «Թաղեցէք զիս, մեռնելէս վերջ...»—Տ. Շնչեկոյի «Կտակ» բանաստեղծութեան անդրանիկ՝ ոչ լրիվ (անաջին ութ տողը), հայերէն լեզվով (դրիմահայերի խոսվածքով) թարգմանությունը կատարել է Վեներիկի Մխիթարյան միաբանութեան անդամ, Ղրիմում բնակվող հասարակական-մշակութային գործիչ, պատմաբան և թարգմանիչ Քերովքե Քոչնեքյանը (1841—1891), որը ուկրաինական բանաստեղծից կատարած իր այլ թարգմանությունների և «Թառաս Շնչեկո—ազգային բանաստեղծ Փոքր Ռուսիո» խորագիրը կրող ծավալուն հոդվածի հետ միասին այն հրատարակել է Մխիթարյան միաբանութեան «Բազմավեպ» հանդեսում 1879 թ. Շնչեկոյի մահուան 65-ամյակի առիթով:

Էջ. 8 Կտակը («Երբ էս մեռնեմ, ինձ թաղեցէք...») — բանաստեղծութեան երկրորդ՝ դարձյալ ոչ լրիվ թարգմանությունն է, որը մանուկների համար կատարել է Խճկո-Սպերը (Սթաբել Խճկոյան, 1870—1953)՝ տպագրելով այն «Անմոռանալի Տարասը» խորագրով իր հոդվածի հետ միասին Թիֆլիսում հրատարակվող մանկական «Հասկեր» ամսագրում, 1914 թ. № 5, Տ. Շնչեկոյի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ:



Էջ. 9 Կտակ «Երբ մեռնեմ ես, թաղեցեք ինձ...»— բանաստեղծության առաջին լրիվ, խորհրդային շրջանում կատարված թարգմանությունն է, որի հեղինակն է Տ. Շևչենկոյի ժառանգության մեծ մասի թարգմանիչ Գեղամ Սարյանը (1902—1976): Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթում» (9 մարտի, 1936 թ.), այնուհետև մտել է Շևչենկոյի «Կորգար» գրքի երեք հայկական հրատարակությունների մեջ (1939, 1954, 1961):

Էջ. 10 Կտակ («Երբ կմեռնեմ, դուր թաղեցե՛ք...») — թարգմանություն Նաիրի Զարյանի (1901—1969)՝ տըպագրված «Խորհրդային Հայաստան» թերթում (26 դեկտեմբերի, 1936 թ.):

Էջ. 11 Կտակ («Հենց որ մեռնեմ, դուր թաղեցե՛ք...») — թարգմանություն Աշոտ Գրաշու (1910—1973), տպագրվել է 1938 թ. «Խորհրդային գրող» ամսագրում (№ 10—11):

Էջ. 12 Կտակ («Երբ որ մեռնեմ, ինձ թաղեցեք...») — թարգմանություն Բաբկեն Կարապետյանի (ծն. 1911 թ.), տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթում (9 մարտի, 1939 թ.):

Էջ. 13 Կտակ («Երբ որ մեռնեմ, ինձ կթաղեք...») — բնագրից թարգմանել է Լևոն Միրիջանյանը (ծն. 1933 թ.): Առաջին անգամ տպագրվել է «Գարուն» ամսագրում, 1973 թ. (№ 10), այնուհետև՝ «Երեկոյան Երևան» թերթում (28 սեպտեմբերի, 1977 թ.), «Հուշարձաններ բարեկամության» գրքում (Ե., 1978), յուրաքանչյուր անգամ՝ նոր մշակմամբ:

Էջ. 14 Կտակ («Երբ ես մեռնեմ, դուր ինձ թաղեք...») — թարգմանություն Սիլվա Կապուտիկյանի: Առաջին անգամ տպագրվել է բանաստեղծուհու «Ծիածանի հարյուր յոթ գույներ» թարգմանությունների ժողովածուում (Ե., 1983):

Էջ. 17 Ինչպե՞ս ծնվեց մարգարիտը—1. Միրիջանյանի այս հոդվածը ներկայացնում է Տ. Շևչենկոյի «Կտակի» ստեղծագործական պատմությունը՝ խարսխված բանաստեղ-

ծի նախորդ երկերի՝ «Դավթի սաղմունքեր» շարքի մանրակրկիտ ուսումնասիրության վրա: Հայերեն տպագրվում է առաջին անգամ:

Էջ. 43 Ծնչեկույի «Կտակը» Հայաստանում—Ս. Ամիրյանի հոդվածի առաջին տարբերակը տպագրվել է ՈՒՍՍՀ Տ. Գ. Ծնչեկույի անվան գրականության ինստիտուտի կողմից պարբերաբար հրատարակվող «Գիտական շնչեկույական կոնֆերանսների աշխատությունների ժողովածուում» (Կիև, 1976): Այն լրացված և վերամշակված հրատարակվում է սույն գրքույկում, հայերեն առաջին անգամ:

1. «Բազմավեպ», 1879, հ. ԼԻ, էջ 39:

2. Նույն տեղում:

3. Լեոյի համակը՝ գրված ոուսերեն լեզվով, գտնվում է ՀԽՍՀ-ի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Յու. Վեսելովսկու արխիվում: Առաջին անգամ է հրատարակվում հայերենով:

4. Խոսք Ավետիք Իսահակյանի մասին: Ե., 1975, էջ 59 (ռու.):

5. Գրական ժառանգություն, հ. 1, Իվան Ֆրանկո, առաջին պրակ, Կիև, 1956. էջ 379 (ուկր.):

## ՏԱՐԱՍ ԸԵՎՉԵՆԿՈՆ ՀԱՅԵՐԵՆ

### (Ս.ՌԱՆՃԻՐ ԻՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

1. Նևշենկո Ս., *ԿՈՐԶԱՐ: Թարգմանություններ Գ. Սարյանի: Խմբագրություն Մ. Արագու: Ե., Հայպետհրատ, 1939: 363 էջ: Տպարանակ՝ 3000 օրինակ:*
2. Նևշենկո Ս., *ԿՈՐԶԱՐ: Թարգմանություններ Գ. Սարյանի, առաջաբան Ալ. Իսահակյանի: Ե., Հայպետհրատ, 1954: 303 էջ: Տպարանակ՝ 5000 օրինակ:*
3. Նևշենկո Ս., *ԿՈՐԶԱՐ: Թարգմանություններ Գ. Սարյանի, առաջաբան Ալ. Իսահակյանի: Ե., Հայպետհրատ, 1961: 294 էջ: Տպարանակ՝ 3000 օրինակ:*
4. Նևշենկո Ս., *ՊՈՆՄՆԵՐ: Թարգմանություններ Գ. Սարյանի: Ե., Հայպետհրատ, 1964: 91 էջ: Տպարանակ՝ 2000 օրինակ:*
5. Նևշենկո Ս., *ՀԱՏԸՆՏԻՐ: Թարգմանություններ Գ. Սարյանի, Հ. Սահյանի, Մ. Բարսեղյանի, Լ. Միրիջանյանի, Հ. Սարգսյանի, Ս. Կապուտիկյանի, Ա. Ալիբեյանի, Ա. Գրաշու, Վ. Կարենցի, Մ. Վեսպերի, Ա. Շիրոյանի, Հ. Սևանի, Ա. Շալբոնի, Ս. Գրիգորյանի, Ա. Խնկոյանի, Վ. Նորենցի: Առաջաբան Ալ. Իսահակյանի: Ե., «Նորհրդային զրոյ», 1989: 175 էջ: Տպարանակ՝ 3000 օրինակ:*

# ТАРАС ШЕВЧЕНКО НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

(отдельными изданиями)

1. *Шевченко Т. КОБЗАРЬ*. Переводы Г. Саряна. Под ред. М. Арази. Е., Айпетрат, 1939, 363 стр. Тираж 3000.
2. *Шевченко Т. КОБЗАРЬ*. Переводы Г. Саряна. Предисловие Ав. Исаакяна. Е., Айпетрат, 1954. 302 стр. Тираж 5000.
3. *Шевченко Т. КОБЗАРЬ*. Переводы Г. Саряна. Предисловие Ав. Исаакяна. Е., Айпетрат, 1961. 294 стр. Тираж 3000.
4. *Шевченко Т. ПОЭМЫ*. Переводы Г. Саряна. Е., Айпетрат, 1964. 91 стр. Тираж 2000.
5. *Шевченко Т. ИЗБРАННОЕ*. Переводы Г. Саряна. А. Сагияна, М. Баблояна, Л. Мириджаняна, Р. Сарухана, С. Капутикян, А. Аликяна, А. Граши, В. Каренца, Веспера, А. Широаяна, Г. Севана, А. Шайбона, С. Григоряна, А. Хнкояна, В. Норенца. Предисловие Ав. Исаакяна. Е., «Советакан грох», 1989. 175 стр. Тираж 3000.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### 1. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Թաղեցէք զիս, մեռնելէս վերջ...»		
թարգմ. Ք. Քուշներյանի	. . .	7
Կտակը («Երբ ես մեռնեմ, ինձ թաղեցէք...»)		
թարգմ. Ա. Խնկոյանի	. . .	8
Կտակ («Երբ մեռնեմ ես, թաղեցէք ինձ...»)		
թարգմ. Գ. Սարյանի	. . .	9
Կտակ («Երբ կմեռնեմ, դուք թաղեցէ՛ք...»)		
թարգմ. Ն. Զարյանի	. . .	10
Կտակ («Հենց որ մեռնեմ, դուք թաղեցէ՛ք...»)		
թարգմ. Ա. Գրաշու	. . .	11
Կտակ («Երբ ես մեռնեմ, ինձ թաղեցէ՛ք...»)		
թարգմ. Բ. Կարապետյանի	. . .	12
Կտակ («Երբ որ մեռնեմ, ինձ կթաղէք...»)		
թարգմ. Լ. Միրիջանյանի	. . .	13
Կտակ («Երբ ես մեռնեմ, դուք ինձ թաղէք...»)		
թարգմ. Ս. Կապուտիկյանի	. . .	14

### 2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լ. Միրիջանյան—Ինչպե՞ս ծնվեց մարգարիտը	. . .	17
Ս. Ամիրյան—Շեշեցկոյի «Կտակը» Հայաստանում	. . .	43
Ծանոթագրություններ	. . .	67

«Հայ դպրութուն» ընկերություն  
ՏԱՐԱՍ ՇԵՎՉԵՆԿՈ  
ԿՏԱԿ

Общество «Армянская письменность»  
ТАРАС ШЕВЧЕНКО  
ЗАВЕЩАНИЕ  
(на армянском языке)

Խմբ. վարիչ՝ Ա. Բ. Յուզբաշյան  
Խմբագիր՝ Ա. Ն. Մանուկյան  
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Վ. Ք. Մանդակունի  
Տեխ. խմբագիր՝ Ռ. Մ. Փահլևանյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Պ. Վարդանյան

ԶԿ

Հանձնված է շարվածքի 21.02.1990 թ.:

Ստորագրված է տպագրության 10.04.1990 թ.: Տպագրություն՝  
բարձր. Թուղթ՝ տպագրական № 1, ֆորմատ՝ 70×90<sup>1</sup>/<sub>32</sub>: Տա-  
ռատեսակ «գրքի սովորական»: 2,77 սլայմ. տպ. մամ., 2,1  
հրատ. մամ.: Պատվեր 193: ՎՅ 05059: Տպաքանակ՝ 3000:  
Գինը՝ 45 կոպ.:

«Հայ դպրություն» ընկերություն

Երևան 10, Ալավերդյան 10:

ՀեՍՀ ԳՍ հրատարակչության տպարան, 378310 ք. Էջմիածին:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0063394



ТАРАС ШЕВЧУК

A I  
19029

# ЗАПОВІТ

Вірменська  
переклади "Заповіту"